

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ



Չորեքշաբթի, 8 Ապրիլ. Առաւօտեան ժամը 9:15-ին, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը գլխավորութեամբ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեանի, Զատկական շնորհաւորութիւններու գրեւոր Ֆրանչիսկեան Քիւսթոտ՝ Հոգշ. Տ. Ֆրանչեսկո Իէլպոյի եւ Միաբանութեան: Ապա ժամը 10:00-ին կատինաց Ամենապատիւ Տ. Փիերպաթիսթա Արք. Փիցաբալա Պատրիարք Սրբազան Հօր եւ Միաբանութեան:

Չորեքշաբթի, 15 Ապրիլ. Առաւօտեան ժամը 10:00-ին, Ս. Յարութեան տօնին առիթով Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը, գլխավորութեամբ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեանի, շնորհաւորութեան գնաց Յունաց Ամեն. Տ. Թէոֆիլոս III Պատրիարքին եւ Միաբանութեան:

Նոյն օրը, ժամը 11:00-ին, Ս. Յարութեան տօնին առիթով, Պատրիարքարան այցելեցին Ֆրանչիսկեան Քիւսթոտ Հոգշ. Տ. Ֆրանչեսկո Իէլպօ՝ իր միաբաններով՝ Զատկական շնորհաւորութիւններ փոխանցելու Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանին եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան:

Հինգշաբթի, 16 Ապրիլ. Սուրբ Յարութեան տօնին առիթով, առաւօտեան ժամը 9:30-էն սկըսեալ, յաջորդաբար Հայոց Պատրիարքարան շնորհաւորութեան եկան նախ Յունաց Ամենապատիւ Տ. Թէոֆիլոս III Պատրիարքը՝ իր միաբաններով: Ապա ժամը 10:15-ին՝ կատինաց Պատրիարքական փոխանորդը՝ իր միաբաններով, ինչպէս նաեւ Կաթողիկ Բողոքական, Ասորի, Ղպտի եւ Հապէշ ուղղափառ եկեղեցիներու հոգեւոր պետեր եւ ներկայացուցիչներ:

Այցելութիւնները տեղի ունեցան եղբայրական սիրոյ եւ փոխադարձ յարգանքի մթնոլորտի մէջ՝ ընդգծելով քրիստոնէական եկեղեցիներու միջեւ գոյութիւն ունեցող համագործակցութիւնն ու միասնութիւնը:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 16:00-ին, Սուրբ Յարութեան տօնին առիթով Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը՝ գլխավորութեամբ Գերշ. Տ. Թէո-

դորոս Եպս. Զաքարեանի, Զատկական շնորհաւորութեան գնաց Սուրբ Երկրի մէջ Հայոց հետեակ՝ Ղպտի եւ Ասորի եկեղեցիներու եպիսկոպոսներուն եւ միաբանութեանց:

Այցելութեան նպատակն էր Ս. Յարութեան տօնին առիթով եղբայրական սիրոյ եւ քրիստոնէական համերաշխութեան ոգիով շնորհաւորել քոյր եկեղեցիներու հոգեւոր առաջնորդներն ու միաբանութիւնները: Հանդիպումներուն ընթացքին փոխանակուեցան բարեմաղթութիւններ եւ ընդգծուեցաւ եկեղեցիներու միջեւ գոյութիւն ունեցող դարաւոր բարեկամական յարաբերութիւնները:

Ուրբաթ, 17 Ապրիլ. Առաւօտեան ժամը 11:00-ին, Սուրբ Յարութեան տօնին առիթով, Սրբոց Յակոբեանց միաբանութիւնը՝ հանդիսապետութեամբ Գերշ. Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան Սրբազան Հօր, Զատկական շնորհաւորական այցելութիւն մը տուաւ Սուրբ Երկրի մէջ Հապէշներու եպիսկոպոս Տ. Ապունէ Արք. Նաթանայէլին եւ անոր միաբանութեան:

Այցելութեան ընթացքին, Սրբազան Հայրը Սրբոց Յակոբեանց միաբանութեան կողմէ փոխանցեց Զատկական բարեմաղթութիւններ՝ ընդգծելով եղբայրական սիրոյ եւ քրիստոնէական միութեան ոգին: Հանդիպումը ընթացաւ ջերմ եւ բարեկամական մթնոլորտի մէջ, ուր վերահաստատուեցան երկու եկեղեցիներուն միջեւ գոյութիւն ունեցող սերտ կապերն ու փոխադարձ յարգանքը:

Երեքշաբթի, 21 Ապրիլ. Սուրբ Երկրի նորանշանակ Պապական Նուիրակ՝ Գերշ. Տ. Ճիորճիօ Լինկուա, իր պաշտօնը ստանձնելուն առիթով, կատարեց իր առաջին պաշտօնական այցելութիւնը Հայոց Պատրիարքարան, ուր ջերմ մթնոլորտի մէջ ընդունուեցաւ երուսաղէմի Հայոց Պատրիարք՝ Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեանի կողմէ:

Հանդիպման ընթացքին շեշտուեցաւ Սուրբ Երկրի մէջ գործող քրիստոնէական համայնքներու միջեւ եղբայրական համագործակցութեան կարեւորութիւնը, ինչպէս նաեւ փոխադարձ յարգանքի

եւ համերաշխութեան մթնոլորտի պահպանման անհրաժեշտութիւնը: Կողմերը անդրադարձան նաեւ ներկայ մարտահրաւէրներուն եւ շեշտեցին համատեղ ջանքերով դիմագրաւելու անհրաժեշտութիւնը՝ ի նպաստ հաւատաւոր ժողովուրդի հոգեւոր սպասարկութեան:

Հանդիպման ներկայ էր նաեւ Սուրբ Աթոռոյս Դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Չորեքշաբթի, 22 Ապրիլ. Իսրայէլի Անկախութեան 78-րդ տարեդարձին առիթով նախագահ՝ Վսեմաշուք Տիար Իսահակ Հերցոկի եւ Առաջին տիկին՝ Ազնուափայլ Միխալ Հերցոկի կողմէ նախագահական պալատին մէջ տրուած ընդունելութեան Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցաւ Գերշ. Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան՝ ընկերակցութեամբ Դիւանապետ Տ. Աղան Վրդ. Գոգչեանի:

Չորեքշաբթի, 29 Ապրիլ. Առաւօտեան ժամը 11:00-ին, Ռամալլայի մէջ Կիպրոսի Ներկայացուցչութեան ղեկավար Տիար Մարիոս Ստարոս ալցելեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Հանդիպմանը ներկայ էր նաեւ Դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Հինգշաբթի, 30 Ապրիլ. Երուսաղէմի Եբրայական համալսարանի մէջ տեղի ունեցաւ Հայոց Յեղասպանութեան նուիրուած յուշ-երեկոյ գիտաժողով: Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան, Հոգեշնորհ Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան եւ Աղան Վրդ. Գոգչեան, իսկ Երուսաղէմի Հայ համայնքին կողմէ՝ Տիար Գէորգ Նալպանտեան: Ներկայ էր նաեւ Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Տիար Արման Յակոբեան: Երեկոյի ընթացքին ասմունքով եւ երգերով հանդէս եկան նաեւ Սրբոց Թարգմանչաց վարժարանի սաները, իսկ բանախօսութեամբ՝ Սրբոց Թարգմանչաց վարժարանի ուսուցիչ՝ Դոկտոր Լէնա Լէվինսոն:

Պատրիարքութեան կողմէ խօսք առաւ Դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Յուշ-երեկոյ գիտաժողովի վերջաւորութեան ներկաները պատուեցան հիւրասիրութեամբ:

Հինգշաբթի, 28 Մայիս. Սուրբ Երկրի նորանշանակ Պապական Նուիրակ՝ Գերշ. Տ. Ճիորճիօ Լինկուա, կատարեց իր առաջին պաշտօնական մուտքը Սուրբ Յարութեան Տաճար:

Եաֆայի դարպասին առջեւ դիմաւորման արարողութեան ներկայ էր Գերշ. Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան, ընկերակցութեամբ Սուրբ Աթոռոյս Աւագ Թարգման՝ Տ. Վազգէն Վրդ. Ալէքեանի եւ Դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգչեանի:

Եաֆայի դարպասէն դէպի Սուրբ Յարութեան Տաճար թափօրին մասնակցեցան նաեւ Պատրիարքութեան երկու պարապանները (ղաֆաս), իսկ Տաճարի մուտքին Պապական Նուիրակը դիմաւորուեցաւ Սուրբ Յարութեան Տաճարի Հայ տեսուչ՝ Տ. Տիրան Վրդ. Յակոբեանի եւ Յոյն եւ Լատին տեսուչներու կողմէ:

Հինգշաբթի, 4 Յունիս. Երուսաղէմի Եբրայական համալսարանին մէջ տեղի ունեցաւ Հրեաներու եւ Քրիստոնեաներու միջեւ փոխարաբերութեանց թէժ գծին նուիրուած համաժողով, որուն Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցաւ եւ խօսք առաւ Դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Ուրբաթ, 5 Յունիս. Լուսարարապետ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեան՝ ընկերակցութեամբ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեանի եւ Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեանի, Բեթղեհէմի Սուրբ Ծննդեան Տաճարի տեսուչ՝ Տ. Ասպետ Ծ. Վրդ. Պալեանի, Դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգչեանի, Սուրբ Ծննդեան Տաճարի ծիսակատար՝ Տ. Վահագն Քհնյ. Սինանեանի եւ Պաղեստինի մէջ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան փաստաբան՝ Տիար Ռաւետ Ամայեայի շնորհաւորութեան գնաց Բեթղեհէմի, Պէյթ Ճալայի եւ Պէյթ Սահուրի նորընտիր քաղաքապետներուն: Շնորհաւորական այցի ընթացքին պատուիրակութիւնը նորընտիր քաղաքապետներուն նուիրեց Երուսաղէմի մէջ յայտնի Հայկական յախճապակիի արուեստի նմոյշներէն գեղեցիկ յուշանուէրնուներ:

Հինգշաբթի, 18 Յունիս. Ժամը 18:30-ին, Երուսաղէմի մէջ Մեծ Բրիտանիոյ Գլխաւոր հիւպատոս Տիկին Հելըն Ուինթըրթընի կողմէ՝ Զարլզ Գ. Թագաւորի ծննդեան տարեդարձի առթիւ տրուած ընդունելութեան, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցան Դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգչեան եւ Աւագ Թարգման՝ Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան:

Ուրբաթ, 19 Յունիս. Առաւօտեան ժամը 11:00-ին, Երեւանէն՝ Հայոց Յեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի եւ ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի գիտաշխատող Դոկտոր Արման Խաչատրեան այցելեց Նորին Ամեն. Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանին եւ անոր ներկայացուց Իսրայէլի Նեկեւ քաղաքի

Պէն Կուրիոն Համալսարանին կողմէ օրերս իրեն շնորհուած դոկտորական վկայականը:

Դոկտոր Արման Խաչատրեանի ատենախօսութեան թեման էր՝ «The Armenian Patriarchate in a Changing Jerusalem: Between Preservation and Modernization» (Հայոց Պատրիարքութիւնը Փոփոխուող Երուսաղէմի Մէջ. Պահպանութեան եւ Արդիակա-նացման Միջեւ):

Հանդիպման ընթացքին, Դոկտոր Խաչատրեան շնորհակալութիւն յայտնեց Նորին Ամենապատուութեան, որ տարիներ շարունակ մշտապէս իր հայրական օրհնութիւնը տուած է՝ ատենախօսութեան վերաբերող Պատրիարքութեան արխի-ներէն օգտուելու եւ զանոնք հանրահռչակելու հա-մար:

Նորին Ամենապատուութիւնը վերստին իր օրհնութիւնը տուաւ Դոկտոր Խաչատրեանին եւ յա-ջողութիւն մաղթեց անոր՝ իր ապագայ գիտական գործունէութեան մէջ:

Երեքշաբթի, 14 Յուլիս. Ֆրանսայի Ազգա-յին օրուայ առիթով Երուսաղէմի՝ Հին քաղաքի Ֆրանսիականներու Սուրբ Աննա եկեղեցւոյ մէջ մա-տուցուեցաւ Սուրբ Պատարագ:

Յաւարտ Սուրբ Պատարագի տեղի ունեցաւ ընդունելութիւն, որուն Երուսաղէմի մէջ Ֆրանսա-յի Ընդհանուր Հիւպատոս՝ Տիար Նիկոլա Գասիա-նիդէսի հրաւերով Երուսաղէմի Հայոց Պատրիար-քութեան կողմէ ներկայ գտնուեցան Դիւանապետ՝

Տ. Աղան Վրդ. Գոգչեան եւ Առժ. Աւագ Թարգման՝ Տ. Սիոն Աբղ. Թաքուշեան:

Ուրբաթ, 17 Յուլիս. Երուսաղէմի մէջ Ֆրան-սայի Ընդհանուր Հիւպատոս Մեծալարգ Տիար Նի-կոլա Գասիանիտէս, իր պաշտօնավարութեան շրջանի աւարտին առիթով, հրաժեշտի ընդունե-լութիւն մը կազմակերպեց՝ ի պատիւ Սուրբ Երկրի հոգեւոր պետերուն:

Ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Երու-սաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Նուր-հան Արք. Մանուկեան՝ ընկերակցութեամբ Դիւա-նապետ Տ. Աղան Վրդ. Գոգչեանի:

Հինգշաբթի, 30 Յուլիս. Տնօրէն Ժողովի ատենապետ Գերշ. Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան Սուրբ Յարութեան Տաճարի նորանշանակ տեսուչ՝ Հոգշ. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեանը պաշտօ-նապէս ներկայացուց Տաճարի իրաւատէր միւս յարանուանութիւններու տեսուչներուն, ինչպէս նաեւ Երուսաղէմի Հին քաղաքի քրիստոնեական համայնքներու պատասխանատու սպայ՝ Տիար Անան Շանանի:

Կիրակի, 2 Օգոստոս. Սուրբ Յարութեան Տա-ճարին մէջ Գերշ. Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան Սուրբ Յարութեան Տաճարի նորանշանակ տեսուչ՝ Հոգշ. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեանը պաշտօ-նապէս ներկայացուց Ղպտի եւ Ասորի եկեղեցիներու հոգեւորականներուն:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼՈՅԵԱՆ

